

Հ Ա Ս Յ Է

Rédaction du Journal arménien


ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE

Ձի հրատարակումս ձեռագիրները
ես չե՛մ տրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է, իսկ
ծանուցումները կ'ընդունուին մասնա-
ւոր համաձայնութեամբ :

Բարեկարգ ծագողութեան
ԵՂԻՔԷ ԹՈՐՈՍԵԱՆ



ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Շ Ա Բ Ա Ք Ա Ք Ե Ր Ք

ՊՇՏՄԱՆՔ

ԵՂԻՔԷ

Տարեկան գրո-ոգը 30

ԱՐՄԱՍՏՄԱՆ

Տարեկան փրակը 10

Բաժանորդ ՅԱՆԵՆՈՒՍ ԵՆՐՈՒ ՓՈՒՍԱՐԿԵ
ՎԵՐԱՄԱՒ ԳԻՐԺ ԱՅԻՒ ԸՂԱՆԻ :

—*—

Թե՛ ԱՐՇԱՒԱՅՈՒ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ
Վերստերեւոյ ճիշտական խնդրոց հաւան
պէտք է դիմել հոլապրոքութեան հասցիով
քերթիս Մասսակարտիս, որ է՛

ԻՒՅԵՐՈՐԳ ՓՈՒՍԱՐԿԵ

ԿԵ ՇՐԱՍԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրներ ուղղակի պատասխանու-
մով են խեղճ գրածներու

ZUSC 20 ՓԱՐԱ ՈՂՁ

ԱՊՐՈՒԱԾ ԿԵԱՆՔԷ

Ա.

ՉՐՊԱՐՏՈՒՄՆԵՐԸ

2.

Որո՞ք են, կ'ըսէինք, զըր-
պարաւածները :

Եթէ հիմնուինք այն ընթացիկ
բանաձեւին վրայ, զոր առաջին գը-
րութեան մէջ յիշեցինք, մի քիչ
խորհելով պիտի համոզուինք թէ՛
չառ գոտար է զըպարաւածները
գասակարգել : Առ նուազն Պալլա-
գի մը գրելով ահագին հատորներու
կը կարոտի այդպիսի մի ձեւնարկ :
Արդարեւ, ըսենք որ, իրաւունքը
զորաւորին է. Եւ որովհետեւ իւրա-
քանչիւր անհատ, աստիճանաբար
հզօրագոյն է քան մի ուրիշ ան-
հատ, և իր երկրպագուներն ունի իր
զօրութեան չափով, ուրեմն ամեն
անհատ, ըստ պարագային և միշտ
վայրին, թէ՛ զըպարաւծ է և թէ՛
զըպարաւած : Օրինակի համար,
հաւանականաբար ես կրնամ հան-
րային կարծիքը իմ հետո ունենալ
երբ խնդիրը սպասուորին հետ է.
Բայց գաստպարաւծինս գրելով
անվրէպ է, եթէ գործս իմ պետիս
հետ է : Այս անձն ալ, որ իմ ձայ-
նը կը խեղդէ, պէտք է պապանձի
աւելի մեծին քով : Եւ այսպէս աս-
տիճանաբար, միշտ գէպի հզօրա-
գոյնը մագլցելով : Եւ միթէ քա-
ղաքականութեան մէջ ալ այնպէս
չ'է՞ : Հզօր պետութեան մը համար
չառ օրինաւոր է բան մը, որ տը-
կարագոյնի մը գլխուն կարկուտներ
պիտի տեղացնէր երկրիս չորս հովի-
րէն : Ինտանաբար, ուրիշ կերպ
ալ չ'կրնար ըլլալ, ըստ որում կա-
ռավարութիւնք և ազդեցութիւնք ան-
հատներէ կազմուած ըլլալով, այս
վերջիններուն առաւելութիւններովը
կամ թերութիւններովը միայն կըր-
նան գեր մը կատարել : Զարմանալի
է որ տկարը զըպարաւծու զգացու-
մը անասուններու մէջ ա՛լ աւելի
չեչտուած է : Ո՛վ քգիտէր տաճկա-
կան առածը « պէօլեք պալքը քիւ-
չիւք պալքը ետէթար » : Զըպարաւծ,
կուլ տալ, անիրաւել կրնան իբր

համանիշ գործածուիլ : Զըպարաւծը,
անիրաւորը իր զոհին մի բանը կուլ
կուտայ. պատիւ, ստացուածք, կեանք
եւայլն : Այս տեսակետով, շատ նը-
շանակալից է Լաֆոնթէնի « գայլն
ու գառնուկը » առակը : Առաջինը,
որ հասանքին վերի կողմը կը գտնուի,
կը զըպարաւծ երկրորդը որ գետին
վարի կողմէն կը խօսէ, իբր թէ շու-
րը կը սլորուի. և այս ակն յայտնի
անիրաւութեան ուժով զայն կը բը-
զըկուէ : Գառնուկին տեղ գտնելը զայ-
լը և այս վերջնայն տեղ սըլ մը և
ահա գերերը կը փոխուին : Գահիճը
կ'ըլլայ աւելի հզօրին զոհը. և այս-
պէս աստիճանաբար մինչև հզօրա-
գոյնը : Հոս արձանագրենք փոքր
գլխով մը, որ՝ ճշմարտան ըսելու հա-
մար՝ հազարաւոր գարեբու տարիքն
ունի : Այսինքն՝ քանի որ անասուն-
ները մեղմէ տարբեր եղանակ մը
չունին իրենց վարմունքին մէջ իրա-
բու հանդէպ, ըսել է որ տկարագոյ-
նը ընդոտելու միտումը աւելի ընտել-
մ է քան թէ մտածումով ընտրուած
մեծանձնութիւն մը : Ուրեմն, իմ
անխղճութիւնս հանդէպ իմ ծառա-
յիս « անտոնական, գրաստական, գա-
ղանական » կիշք մ'է . . . : Ուրիշ
հետեւութիւն մը. եթէ « պարտքի և
իրաւունք » ի պէս ամենակարեւոր
հարցերու մէջ անասուններէ տար-
բեր չ'ենք գործեր, պատճառն այն
է որ Մարդ բառին նշանակութիւնը
տակաւին չ'ենք հասկցած, այլապէս
պիտի գիտնայինք որ մեծ կարծու-
ծին առջև ծնկաչոքել և փոքր երե-
ցողը արացել մեր ինքնութիւնը ու-
րանալ է :

Այն ատեն ի՞նչ կրնանք սպա-
սել ազգէ մը որուն իւրաքանչիւր
անդամը իր անձին վրայ ամենափոքր
գաղափար մ'անդամ չ'ունի : Եւ
ի՞նչու սրտերնիս սեւեր կը հագնի ահ-
ռելի ոճերնիւրու առջև, երբ չենք
խորհիր որ անհատ մը, ո՛վ որ ալ
ըլլայ, ուժ մ'է և այդ անհատը
մէջ տեղէն վերցնելով չէ՛ թէ միայն
ժողովուրդի մը՝ այլ ամբողջ մարդ-
կութեան հաւասարակութիւնը կը
վերաւորենք :

Եթէ փոխանակ սրճարաններու,
խաղարաններու մէջ և այլուր մեր
թանկագին ժամանակն սպառելու,
եթէ փոխանակ ամենավարձոց խօ-

տակցութեանց մէջ մեր միտքն ու
հոգին սպաննելու, օրը մի միայն կէս
ժամ ինքնամփոփ խորհրդածու-
թեամբ պարտքի և իրաւունքի վրայ
յառենք մեր ունի ու ուրուչը, շատ
չ'անցած պիտի համոզուինք որ՝ ո՛չ
սք իրաւունք ունի ուրիշի մը վրայ
ձեռք վերցնելու. պիտի համոզուինք
թէ ազատութիւն փնտռող անձի մը
կամ ազգի մը առաջին պայմանը
պէտք է ըլլայ խիղճի և միտքի ա-
զատութիւն : « Պէտք է, կ'ըսուի,
մեռնիլ հայրենեաց սիրոյն համար »
Ամեն տեսակ արեւհեղութենէ խոր-
շելով հանդերձ, ինչ ձեւի տակ ալ
ըլլայ, թերեւ պիտի համակերպէի
այդ բանաձեւին՝ եթէ թշնամիի հետ
ըլլար մեր գործը, բայց, այդ բա-
նաձեւին զօրութեամբ, հայրենիքի
պաշտպանութեան ոչնչացնել, ի՞նչ
սղբալի հակասութիւն . . . :

Ոճիրը ազատութեան արդիւնք
է, և անոր զէնքը երկսայրի. երբ
մէկ կողմէն զոհը կը խողովուրդէ,
միւս կողմէն սպաննիչն սիրտը կը խըր-
ուի ու կամ կանուխ : Զայս կը պա-
հանէ բնական անփոփոխելի օրէն-
քը, զոր տիրաբար կը սրբացնէ
« որ սուր առնուցու, սրով անկա-
նիցի » ն :

Արդարեւ, առանց կենդանի օրի-
նակներ առաջ բերելու, կը բաւէ
միայն ընտելութիւնը հետադիմել, հա-
մոզուելու համար թէ՛ ո՛չ միայն
մեր արարքը այլ նոյն իսկ մեր չար-
տայայտուած մտածումներն իրենց
հակահարուածը ունին : Կերևայ թէ
մարդկութեան նախահայրերը վերջին
աստիճան սղէտ՝ քաշու և բա-
րեկու ձեւերուն մէջ, աւելի հե-
տաքնին էին իրենց շարժը անցած
զարձածին : Այս է պատճառ. որ
այնքան թանկագին, այնքան պեր-
ճիմաստ առածներ ձգած են մեզի :
Անգամ մը խորհեցէք սա խօսքին
վրայ « բարիք ուզէ՛ հարեանիդ, բա-
րիք կուգայ քո գլխիդ » և զայն
բազմապէս վերջին դարու հո-
գեբան գիտուններու և փիլիսոփա-
ներու վերջին գիւտերուն հետ : Այն
ատեն գուրջ ալ ինձի պէս պիտի հա-
մոզուիք թէ՛ մարդ ցանածը կը քա-
ղէ : Այն ատեն յստակօրէն պիտի
տեսնէք թէ՛ աշխարհս գալոց մ'է,
ուրիշ շրջանաւարտ ըլլալէն ետքն
է որ կ'սկսի գործն — աշխարհիկ

բարբառով — չուկայի կեանքը : Եւ
այն ատեն ալ պիտի համոզուիք թէ՛
— ամեն տեսակետով — լաւ է իրե-
րասիրտ թիւն և մեծանձնութիւն քա-
րողել, քան թէ եղբայր եղբոր դէմ
զինել և վատութեանց ուսով իրայ
ըլլալ : Այս՝ պէտք է որ ժողովուր-
դը սիրէ և յարգէ յիշատակը այն
ուժին, որ իր ծոցէն վայրագօրէն
կը խլուի : Բայց երբ, ի սէր այդ
ուժին, ստորնութեան դասեր կ'ա-
ւանդուին ժողովուրդին, այն ատեն
վա՛յ է եկեր ազգին գլխուն . . . :

Վաղածամ է, սակայն մեք այս
խնդրութեանց ու անհեթեթութեանց
վրայ դարձեալ ծանրանալ, և չեմ
կարծեր նոր ըսելիքներ ալ ունենալ,
իսկ թիս հասածը արդէն տարիներ
առաջ հրապարակած ըլլալով՝ ուստի
կը վերագառնամ իմ այսօրուան
նիւթիս :

Ա. ՊԱԼԵԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Հ ՈՐԻ Զ Ո Ն

Հեռագիրները արդէն ծանու-
ցին Վանի Հայ յեղափոխականներու
և Թուրքերու միջև պատահած ընդ-
հարումները և երկուստէք շատ մարդ-
կորսուած ըլլալը :

Անոնք որ այդպիսի ընդհար-
մանց և մասնակի կռիւներու մէջ
« Հայկական Հորիզոն » իր միժա-
մած ամպերէն մեղկացած և կա-
պուտագեղ երկինքի մը փոխարի-
ուած ունենալու չափ շարասեւ էին,
պահ մը գոհունակութեան մը ժը-
պիտը փայլեցաւ իրենց դէմքին վրայ :
Իսկ յոռեսեւեւերը՝ հեռագրական
այդ հակայացած լուրերուն տակ ան-
ցեղայն փորձառութիւններէն իրատա-
ուած՝ չափազանցուած և կամ ին-
չաթիւրուած բան մը նշմարել ու-
զեցին : Եւ իրենց սիրտը ստապիւղ
այդ հրեհհին վերջ մը գնող լուրի
մը հապաստէին և ահա հետզհետէ ի-
րականութիւնը քիչ տարբերութեամբ
պարզուլ լուրերը իրարու կը յաջոր-
դեն, ժխտելով շարասեւեւերուն սը-
նուցած գոհունակութիւնը, և սըլս-

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ ԵՒ ԸՆՏԻՐ ՄԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷԲԻՅԷ



ՄԵՓԱԿԱՆԱՏԵՐՔ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂԱՐԱՐՔ

ՅԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է .

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՛ պէտք է նախընտրել մեր վաճառատուներ :

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարետներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատներին :

Պարսկական ամենաընտիր թէմպէքի ալ և ալ տեսակները բայց մեր վաճառատուներէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալ է :

Մեր վաճառատուներ վերջապէս, զիններու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և ալ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որչա՞ծ ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անմիասելի ապացոյցներէն մին ալ զարդացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են :

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂԱՐԱՐՔ

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ . ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պալատի փողոց . Խաղնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց Գաֆէ Տը Լա Պուրսի կէց
Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՉ ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐ ՈՒՆԻ


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Մինկըրներն են և ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է :

400 և աւելի վիսյական եւ մեայքներով վարձատրուած, Երաշխաւորեալ մեխանիկներ.

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ
Ա.Ռ.Ա.ՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստահանդիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՄԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԳՂԻՈՑ ԿԱՅՄԵՐԱԿԱՆ
ԿԱՅՄԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԹԱԳԱՒՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ե . Բ . ԵՏԻՎԱՅԻՆ ՑԱՆ

Կեղծերէն զգուշանալ,
ուշադրութիւն դարձնել
Իւրաքանչիւր մեքենայի
վրայ Մինկըրի յասկանշիմ



Ձրի դասեր և նորոգու-
թիւններ, Մինկըր մեքենա-
յից համար, յաճախորդաց
տուններուն մէջ :

Վճարմանց գիրութիւն

Փոխանակութիւն հինքու
և նորոգութիւն ամեն կարգի
Մեքենայից

Գին ՉԱՓԱՒՈՐ

ՀՆՁԱԿ

Կեղրուական Օրկան Հեցսիկան
Կուսակցութեան
ԲՍԱՆԵԻՄԷԿԵՐՈՐԳ ՏԱՐԻ

Հասցէ՝ M. Bellart
24 Avenue du parc de Montsouris
Paris France

ԱՐՄԷՆԻԱ

Լրագիր Ազգային . Բարախսեան եւայլն .
ԻՐ յղ . ՏԱՐԻ

Հասցէ՝ M. Portoukalian
Directeur du journal « ARMENIA »
Maaseille France

ՌԱԶՄԻԿ

Լրագիր Ազգային . Գրական եւ Բարախսիկ .
ԵՐՐՈՐԳ ՏԱՐԻ

Հասցէ՝ Rédaction du journal
arménien « RAZMIG »
Pitipople Bulgarie

ԾԱՆՈՒ ԳԻՐԲԵՐ

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Թիւ. 1 Թրքուհին 50 սանթիմ
« 2 Հիւլէն 50 »

Ժողովուրդին Մատենադարանի գր-
քոյկներուն հեղինակն է Տ . Ա . Պալ-
եան, եղիպտական քաջ ծանօթ իր
հրատարակութիւններով եւ յօդուածնե-
րով: Թր/ուհին, պատկեր մ'է Ուրֆայի
կոտորածին, եւ Հիւլէն եղիպտագաղթ
հայուիւնան առաջին օրերուն մի ման-
րանկարը յեղափոխական գործունէու-
թեանց վրայ խորհրդածութիւններով:
Դիմել « Արշալոյս » խմբագրութեան
կամ ուղղակի հեղինակին, հետեւեալ
հասցէով:

A. BALIAN

(Egypte) Le Gaire

Մ Ի Ն Յ Ի Ն Ս Ս Գ Ս Ե Ա Ն Spécialiste pour les cheveux ՇՍՐՍ ԱՊՏ ԷՂ ԱՉԻՉ ԹԻՒ 5.



Մինչև հիմայ եղած փորձերով հաստատուած է որ Փափագ Օրիկ կամ Պիք Օրիկ եւ ասոնցմէ մասնաւորապէս պատրաստուած հեղուկներուն գործածութիւնը սքանչելի արդիւնք տուած է՝ թէ՛ մազերը չի թափելու եւ թէ՛ երկնցնելու համար: Միակ դարմանն է այս պատրաստութիւնը՝ անխճները, ոչինքներն ու մազերու արմատներուն վրայ բոյն դրած միքրոպները սպաննելու:
Մինչև ցարդ ինձ դիմողներն վերջին ծայր գոհ մնացած ըլլալով՝ յուսով եմ որ յետ այսու ալ զգոհ ըլլալու պատճառ մը չ'պիտի ունենան:
Անխարդախ ու մեծ խնամով պատրաստուած Պոլսոյ ամենաընտիր մազի ներկերուն ամէն գոյներէն ալ կարելի է դանել իմ վաճառատուներս:
Դիմեցէք, փորձեցէ՛ք եւ զո՞հ պիտի մնաք:
Մ. ՍՍԳՍԵԱՆ

ՄԵԾ ՄՐՃԱՐԱՆ ԼԱՅԿԱԿԱՆ

GRAND CAFE ARMENIEN (Le Caire)

Սալն Մրճարանը որ Միսան էջ Խազնէսարի օրասուն հրապարակին վրայ կը գտնուի, իր մաքուր քանակ եւ ընդարձակութեամբ իր սեւակին մէջ յարմարագոյններէն մին է հանգստի ժամանակ անցնելու:
Մրճարանը յաճախողներ վերոյիշեալ առաւելութիւններէն զատ հոն պիտի գտնուի նաեւ շաւարոյն ընկերակներ, նոր եւ ընտիր պիւրատներ եւ անբերի սպասարկութիւն :

ՍԵՓՀԱԿԱՆԱՏԵՐ
ՄԻՍԱՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն

ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ
ՀԻՄՆՈՒԱԾ 1900 ԻՆ

ՀԱՍՏԱՏՈՒՍԵ Է Ի ՇՍՐԱ ԱՊՏ-ԷԼ-ԱՉԻՉ
ԵՒՐԻՑ ԲԱՇԱՅԻ ՊԱՐՏԷՉԻՆ ԴԷՄ

Կ'ընդունի տպագրական ամէն տեսակ յանձնարարութիւններ .
Նամակագրուի, ազգարարութիւններ, այցեքարտեր, մահադրներ,
գիրքերու և պրոչիւրներու տպագրութիւններ և այլն .
Յանձնարարութեանց համար սակարկուած գնոյն կէսը կանխիկ է,
իսկ մնացեալ կէսը յետ տպագրութեան՝ յանձնման պահուն վճարելի .
Յանձնարարութիւնը ամենայն ճշգրտահարութեամբ պիտի կատարուին .
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻ